

Իրաչարուր Արույանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիալ-տնտեսական աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԴԱՆԴԱՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

(Արոտավայրերի դեգրադացման օրինակով)

Հոդվածում ներկայացված է Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքի արոտավայրերի դեգրադացման խնդիրը, որպես դանդաղ ձևավորվող բնական աղետի օրինակ: Ուսումնասիրությունները կատարվել են երկու տարի և շարունակվում են: Աղետներ ռիսկերի նվազեցման համար իրականացվել են իրազեկման տարբեր աշխատանքներ և առաջարկություններ, այդ թվում 25–30 հա. տարածքում ծառատունկ, որը նախատեսված է 2014 թ. գարնանը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ դանդաղ ձևավորվող բնական աղետ, ռիսկի նվազեցում, արոտավայրեր, դեգրադացում, սելավային երևույթներ, GPS, իրազեկում:

Դանդաղ ձևավորվող բնական աղետներից է արոտավայրերի դեգրադացումը: ՀՀ գյուղատնտեսության համար առանձնակի նշանակություն ունեն ալպիան և ենթալպիան գոտու արոտավայրերը: Արոտավայրերի պահպանության և ռացիոնալ օգտագործման խնդիրները քննարկելիս պետք է հաշվի առնել նաև կլիմայի փոփոխման ներկա երևույթները: Ներկայումս՝ արոտավայրերի սեփականաշնորհման, վարձակալության համատարած երևույթը և անկանոն, չհսկվող շահագործումը նպաստում են դրանց արագ դեգրադացմանը: Այս երևույթը հատկապես աղետալի է սակավահող համայնքների համար, հատ-

կապես նրանց հարող տարածքներում: Այս իսկ պատճառով մեր ուսումնասիրության համար նախընտրեցինք Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին գտնվող Պեմզաշեն համայնքին ամիջականորեն հարող, հյուսիս-արևմտյան դիրքադրությամբ, մերձալպիան գոտու 20–35⁰ թեքությամբ, մոտ 2.5 հա մակերեսով տարածք:

Պեմզաշեն համայնքը համարվում է առավել սակավահող համայնքներից մեկը ՀՀ-ում, ունի ընդամենը 400 հա վարելահող, 1200 հա արոտավայր և խոտհարք, մեկ շնչի հաշվարկով մոտ 100 քառ/մետր գյուղատնտեսական հողատարածք: Համայնքի տարածքում շուրջ 350հա լքված քարհանքեր են: Համայնքում բարձր է նաև աղքատության ցուցանիշը, տարածքում կամ մոտակայքում չկան ձեռնարկություններ:

Գյուղին անմիջական հարող արոտային տարածքներն Արագածի լանջն ի վեր են, ունեն լանջային տարբեր դիրքադրումներ ու թեքություններ: Այս շրջանում շատ են նաև լանջերի հիմքային մերկացումները: Մերձալպիան գոտու ստորին սահման հանդիսացող նշված տարածքը ծառայում է որպես արոտավայր: Հողածածկը հիմնականում սևահողային է, հիմքում կավային ծածկույթով, որտեղ սևահողի շերտը տատանվում է 10–15սմ–ի սահմաններում: Տարածքի կլիման բարեխառն ցամաքային է, լավ

արտահայտված տարվա եղանակների հերթագայմամբ: Տեղումները գերազանցապես թափվում են գարնանը՝ ապրիլ-մայիս ամիսներին, հասնելով մինչև հունիսի կեսը: Ամառը տևական չոր է, սակայն երբեմն դիտվում են տեղատարափ անձրևներ ու կարկուտ: Տեղումների երկրորդ ռեժիմը ակտիվանում է աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Կայուն ճյունածածկը հաստատվում է նոյեմբերից-ապրիլի սկիզբը: Տարածքում իշխում են տարախտտային հացազգիները, վերջին շրջանում անկախն գերարածեցման հետևանքով նվազել են օգտակար բուսատեսակների բաժինը: Վերջին հինգ տարիներին նշված տարածքի դիտարկման ժամանակ ուրվագծվում է ոչ միայն բուսազրկումն ու լանջային էրոզիայի զարգացումը, այլև լանջային սողանքին նպաստող պայմանների ակտիվացումը, ինչը դանդաղ ձևավորվող բնական աղետի լավագույն օրինակն է: Այս պայմաններից են՝

- արոտային շրջանի տևողության ռեժիմի խախտումը (վաղ գարնանը և ուշ աշնանը՝ հատկապես մանր եղջերավոր անասունների դեպքում),
- ընտանի կենդանիների շարժը գարնանային ակտիվ ծլարձակման շրջանում, երբ հողաշերտը գերխոնավ է,
- ծառայելով որպես անասունների մշտական շարժի ուղի, տարածքում ակտիվացել է ճանապարհային էրո-

զիան, ժամանակի ընթացքում վերաճելով՝ ակոսային էրոզիայի:

- Լանջերի ստորին մասում այն արդեն երկարաձգվել է մեկ մետր և ավելի խորության հեղեղատների: Հեղեղատների խորացումը և հետագա հեղեղատասառաջացման գործընթացին նպաստում են նաև վերջին տարիներին տարածքում դիտվող տեղատարափ անձրևներն ու կարկտահարությունը, որը արդյունքում ակտիվացնում է սելավային երևույթները:

Տարածքի նախնական դիտարկումը կատարվել է 30.06.2010թ. ՀՊՄՀ-ի աշխարհագրության բաժնի ուսումնական պրակտիկայի ժամանակ, ուսանողների անմիջական մասնակցությամբ: Հետագա ուսումնասիրումը կատարվել է պարբերական դիրարկումների և հաշվարկների միջոցով: Կարևոր է նաև համայնքի ղեկավարության և ավագանու շահագրգիռ դիրքորոշումն այս տարածքում դիտարկումների իրականացման համար:

Ուսումնասիրության համար ընտրված տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝ (WGS 84 UTM zone 38 համակարգով, աղյուսակ 1):

Ուսումնասիրման համար ընտրված այս տարածքը՝ մոտ 2.5 հա, բաժանվել է հավասարաչափ քառակուսիների 100x100մ մակերեսով: Հաշվարկվել է բուսածածկի առկա/բացակա տոկոսային հարաբերությունը:



ամսաթիվը	տարածքի համարը	տարածքի աշխարհագրական կոորդինատները		բարձր. ծովի մակ.
14.06. 2010	1	N 40° 35.188	EO 43° 57,159	1840.1 մ
14.06. 2010	2	N 40° 35.183	EO 43° 57,158	1849.7 մ.
14.06. 2010	3	N 40° 35.178	EO 43° 57,269	1866.7 մ .
14.06. 2010	4	N 40° 35.135	EO 43° 57,321	1892.7 մ
14.06. 2010	5	N 40° 35.133	EO 43° 57,251	1887.6 մ
14.06. 2010	6	N 40° 35.110	EO 43° 57,175	1876.1 մ.

* Առաջին դիտարկում՝ 14 հուլիսի 2010թ. Առավելագույն արդյունքը կազմել է 78.4% (5 քառակուսիներ), իսկ նվազագույնը՝ 22.5% (10 քառակուսիներ) նախնական հաշվարկով բուսածածկի ընդհանուր միջինացված արժեքը կազմում է 68.2%:

* Երկրորդ դիտարկում՝ 14 օգոստոսի 2010թ. Առավելագույն արդյունքը կազմել է 61% (2 քառակուսիներ), իսկ նվազագույնը՝ 12.5% (8 քառակուսիներ) նախնական հաշվարկով ընդհանուր միջինացված արժեքը կազմում է 48.8%:

* Երրորդ դիտարկում՝ 12 սեպտեմբերի 2010թ.

Առավելագույն արդյունքը կազմել է 52% (2 քառակուսիներ), իսկ նվազագույնը 2.5% (10 քառակուսիներ) նախնական հաշվարկով ընդհանուր միջինացված արժեքը կազմում է 32.2%:

* չորրորդ դիտարկում՝ 21 նոյեմբերի 2010թ.

Գարնանային դիտարկումները ավելի հիմնավոր դարձնելու և գնահատման արդյունավետության բարձրացման համար, լրացուցիչ, ընտրվեցին 12 կետեր: Այս կետերից 10-ը նշվեցին փայտե համարակալված ցցանիշերով և գրանցվել են նրանց կոորդինատները /աղյուսակ 2/:

* հինգերորդ դիտարկում 29.05.2011թ.:

ցուցանիշերի համարները	Աշխարհագրական կոորդինատները		բարձր. ծովի մակ.
1	N 40° 35,170	EO 43° 57, 110	1842 մ.
2	N 40° 35,162	EO 43° 57, 117	1843 մ.
3	N 40° 35, 164	EO 43° 57, 170	1843 մ.
4	N 40° 35, 137	EO 43° 57, 186	1862 մ.
5	N 40° 35, 147	EO 43° 57, 245	1873 մ.
6	N 40° 35, 149	EO 43° 57, 273	1877 մ.
7	N 40° 35, 148	EO 43° 57, 303	1882 մ.
8	N 40° 35, 138	EO 43° 57, 345	1886 մ.
9	N 40° 35, 173	EO 43° 57, 275	1889 մ.
10	N 40° 35, 168	EO 43° 57, 322	1875 մ.

Գիտարկումների համար ամրացված ցցանիշերի մի մասը տեղանքի հողի հեղեղման և փլվածքների հետևանքով չեն հայտնաբերվել / 5 ցցանիշերը /: Մնացած 5 ցցանիշերը պահպանվել են, ըստ GPS-ի ցուցմունքների արձանագրվել է տեղաշարժ՝ երեք ցցանիշերը (թիվ 1,5,6) նկատելիորեն, իսկ 2-ը(թիվ 3,10) զգալի:

Բուսազրկված տարածքի չափաբաժինը միջինը 2011թ.կազմել է 60-75% նախորդ՝ 2010թ. 50-55%-ի փոխարեն, ընդ որում, առկա են լրիվ բուսազրկված հատվածներ:

Առաջին և հինգերորդ դիտարկումների արդյունքում մեկ տարվա, ժամանակահատվածում առաջացած էրոզիոն ակոսներն ու ձորակները խորացել են միջինը 15-20%-ով:

Գիտարկման դաշտային աշխատանքների կատարումը և հետագա ԵՏՀ-ում տվյալների մշակումը իրականացվել է ամբիոնի քարտեզագիր Տ. Բարայանի անմիջական մասնակցությամբ:

Դիտարկման արդյունքներում արձանագրվել է /29.05.2011/լանջն ի վեր մոտ 20մ լայնությամբ նոր երկարաձգված հողաշերտի խախտում 25-30մ երկարությամբ: Այս հանգամանքը փաստում է՝ մեկ տարվա կորվածքով դեպի վեր էրոզիայի ակտիվացումը:

Վերջին դիտարկման արդյունքում /15.06.2013/ վերը նկարագրված տարածքը ներկայացնում է լիովին դեգրադացված, լանջն ի վեր բուսազուրկ, նախորդ տարիների համեմատ առավել ընդարձակված հեղեղատներով, էրոզացված լանդշաֆտ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ Տեղումների առավել տեղատարափ և ինտենսիվ բնույթը, հաճախակի սելավային երևույթները բուսազրկված տարածքում առաջացնում են հեղեղումներ: *Որսկես հեղևանք*՝ դիտարկված տարած-

քում *առաջացել է արուրային համակարգի չկանոնավորված և անկառավարելի իրավիճակ*: Այս ամենը սկզբնավորվեց սեփականաշնորհման գործընթացին զուգահեռ, իսկ ավելի ճիշտ պետական վերահսկման թուլացմամբ:

Բնածին և մարդածին ազդակների համատեղ ներգործությամբ բնական լանդշաֆտները տարեցտարի ավելի խոցելի են դառնում:

հանրապետության լանդշաֆտների արիդացման ոլորտը աստիճանաբար ընդլայնվում է, նրանց խոցելիության բնույթն ու աստիճանը ավելի են ուժեղանում: Մրան համընթաց առաջանում են սելավային նոր օջախներ, ընդլայնվում են հները:

Կլիմայի չորացումը, տեղատարափ տեղումների ինտենսիվության աճը և բնական լանդշաֆտների անթրոպոգեն ծանրաբեռնվածության աճը երաշխիք են կանխատեսելու, որ սելավային երևույթները ՀՀ տարածքում պրոգրեսիվ աճում են: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ տարածքի սելավային երևույթների 75%-ը բաժին է ընկնում 1800-2600մ բարձրություններին [1, էջ 73-74]:

Դրա պատճառներն են՝

- նշված բարձրությունների գրաված ընդարձակ մակերեսը,
- ավելի բարձր մակարդակներից հոսքի համակենտրոնացումը այս բարձրություններում,
- մարդածին ազդակի ներգործունեության ավելացումը այդ գոտում:

Բնական աղետների ռիսկերի նվազեցման լավագույն միջոցներից է հանրության և պատկան մարմինների իրավիճակի մշտական իրազեկումը: Մեր կողմից դիտարկված երևույթի , որպես դանդաղ ձևավորվող տարերային աղետի իրազեկման գործընթացը ար-

դյունավետ է իրականացնել հետևյալ օղակներով:

Առաջնային իրազեկումը համայնքի ազգաբնակչությանը, ներգրավելով նաև դպրոցը: Իրազեկման հաջորդ օղակը՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են, քանի որ երևույթը կարող է ավելի լայնամասշտաբ դրսևորումների հասնել: Խնդիրների հիմնարար

լուծման և կանոնակարգման նպատակով անհրաժեշտ է իրազեկել նաև հանրապետական պատգամ մարմիններին, նախարարություններին:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ. Հանդիպում գրույցներ և բացատրական աշխատանք տեղի ազգաբնակչության հետ:

Գեպի արոտ կենդանիների շարժի կանոնակարգում, նոր ուղու ընտրություն:



Տարածքի ներկա իրավիճակը

Մշակել կենսունակ ծրագրեր *համայնքին հարող վերոհիշյալ տարածքներում 25–30 հա ծառատունկի իրականացման համար: Այս լուծումը միակ և արդյունավետն է: Քանի որ ամեն հաջորդ տարի խնդիրն ավելի է բարդանում և, ի վերջո, տարածքը լիովին կդեգրադացվի, դադարելով որևէ նպատակի ծառայելուն:*

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 06.05.13 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխարհագրություն 99, գիտական աշխատությունների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 1999:

ВОПРОСЫ ИССЛЕДОВАНИЯ И СНИЖЕНИЯ РИСКА МЕДЛЕННО
ФОРМИРУЮЩИХСЯ СТИХИЙНЫХ БЕДСТВИЙ (НА ПРИМЕРЕ ДЕГРАДАЦИИ ПАСТБИЩ)

АШОТ АДЖАМОГЛЯН

*Заведующий кафедрой социально-экономической географии и методики
преподавания географии Армянского педагогического университета им. Хачатуря
Абовяна, кандидат педагогических наук, доцент*

В статье представлены риски деградации пастбищ территории общины Пемзашен Ширакского марза РА как фактора медленно формирующегося стихийного бедствия. Периодические проверки и исследования проводились в течение двух лет на отведенном участке. Представлен метод научного изучения бедствий с использованием системы GPS. Определена динамика формирования бедствия. Даны рекомендации по предотвращению бедствия, снижению риска и осведомлению населения.

Дата представления статьи: 06.05.13 г.

PROBLEMS OF SLOWLY FORMING NATURAL DISASTER
INVESTIGATION, INQUIRY AND RISK REDUCTION
(ON THE EXAMPLE OF PASTURE DEGRADATION)

ASHOT AJAMOGHLYAN

*Head of the chair of Socio-Economical Geography and Geography Teaching Methods
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan Candidate of
Geographical Sciences, PhD*

The article presents the risk of degradation of pasture, in the territory of the community Pemizashen Shirak region of Armenia, as an example of slowly forming a natural disaster.

Periodic inspection and survey was conducted for two years in a designated area. We present a method to study the use of GPS systems. Defined the dynamics of the formation of disaster: Recommendations for the prevention of disaster risk reduction and public awareness.

Article submission date 06.05.13